ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՍԱՅԱՆ ԳՈՌ ՍՈՒՐԵՆԻ

Ա.Ի. ՄԻՐԱՔՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԹ.00.01. - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Ռուբեն Միքայելի ՆԱՂԴՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Մելս Պարգևի ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու
Մարիա Վռամի ԹԵՎՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. նոյեմբերի 8–ին ժամը 12^{00}–ին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ–ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. հոկտեմբերի 7–ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հոգեկան արտացոլման գործընթացը մարդկության պատմության մեջ լինելով ամենախնդրահարույց հարցերից մեկը, միաժամանակ պատկանում է ամենաքննարկված և մեկնաբանված խնդիրների շարքին: Դրանով հետաքրքրվել են մարդկության ամենապայծառ ուղեղները՝ անտիկ ժամանակներից սկսած մինչ օրս, սակայն, առ այսօր, այդ խնդրի շուրջ գիտական բանավեճերը չեն թուլացել և չեն կորցրել իրենց հրատապությունը:

Արշակ Իսրայելի Միրաքյանի (1929-1995) հետազոտությունները ևս նվիրված են հոգեկան արտացոլման գործընթացի բացահայտմանը, միայն թե, ի տարբերություն նախորդների, նա իր ուսումնասիրությունները սկսեց ոչ թե այն հարցից, թե ինչպես են մարդիկ, կենդանիները արտացոլում իրենց շրջապատող աշխարհը, այլ նրանից, թե ինչպես է հնարավոր լինում ընդհանրապես՝ հոգեկան արտացոլման գործընթացի առաջացումը:

Այդ հարցին պատասխանելու համար հայազգի հոգեբանը, Մոսկվայի Ընդհանուր և մանկավարժական հոգեբանության ինստիտուտի (այժմ՝ Ռուսաստանի Կրթության Ակադեմիայի Հոգեբանական ինստիտուտ) ընկալման լաբորատորիայում, իր աշակերտների և համախոհների հետ սկսեց զբաղվել այդ դժվարին գործով: Արդյունքում, նրա կողմից առաջարկվեց հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու մի նոր մոտեցում, ինչն անվանվեց ոչ արգասիքային (непродуктный)՝ «աֆիզիկալ» (афизикальный), հակառակ գերիշխող մեխանիստական, ֆիզիկալ (физикальный) մոտեցման, իսկ նրա հայեցակարգը կոչվեց ընկալման տրանսցենդենտալ հոգեբանություն:

Այդ հայեցակարգը հետազոտողին թույլ է տալիս դուրս գալ արգասիքային մտածելակերպի սահմաններից և հոգեկան արտացոլման խնդիրը ուսումնասիրել ավելի խոր մակարդակի վրա, որի ժամանակ հետազոտողին հնարավորություն է ընձեռվում բացահայտել հոգեկան արտացոլման գործընթացը առաջացնող սկզբունքները և օրինաչափությունները: Սակայն, հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգը այդպես էլ դուրս չեկավ մոսկովյան իր լաբորատորիայի շրջանակներից (բացի որոշ վերապահումներից) և չընդգրկվեց ո՛չ հոգեբանության դասագրքերում (թե Հայաստանում և թե Ռուսաստանում) և ո՛չ էլ հայ հոգեբանների գործունեությունը նկարագրող և լուսաբանող որևիցե գիտական ձեռնարկում:

Այս հանգամանքը պայմանավորված չէր նրանով, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգում բացակայում էին նորարարական կամ ստեղծագործական գիտական արժեքները, այլ դրա հիմնական պատճառները թաքնված էին հետևյալ երկու հանգամանքներում. 1) ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը կասկածի տակ էր դնում

հոգեկան արտացոլման գործընթացի սկզբունքները և օրինաչափությունները բացահայտելու խորհրդային հայտնի հոգեբանների (Բ.Գ. Անանև, Ա.Ն. Լեոնտև, Վ.Պ, Զինչենկո, Ս.Դ. Սմիրնով և ուրիշներ) մոտեցումները և այնքան էլ համահունչ չէր մատերիալիստական, մարքսիստական գաղափարախոսությանը (ինչը խորհրդային ժամանակաշրջանում, եթե ոչ պարտադիր, ապա առաջնային պայմաններից էր) ու 2) նրա հայեցակարգը լավ ըմբռնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել ֆիզիկալ (արգասիքային) մտածելակերպը և ձեռք բերել աֆիզիկալ (ոչ արգասիքային) մտածելակերպ, ինչի մշակումը հեշտ գործ չէր և պահանջում էր մեծ ջանքեր:

Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների գիտական արժեքի մասին է նաև խոսում այն փաստը, որ 1999 և 2004թթ., Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի հոգեբանության Ինստիտուտի կողմից հրատարակվեցին «Контуры трансцендентальной психологии» (Տրանսցենդենտալ հոգեբանության ուրվագծերը) երկհատորյա մենագրությունը, և 2010թ. Ռուսաստանի Կրթության Ակադեմիայի, Հոգեբանական ինստիտուտի կողմից կազմակերպվեց միջազգային կոնֆերանս՝ «А.И. Миракян и современная психология восприятия» (Ա.Ի. Միրաքյանը և ժամանակակից ընկալման հոգեբանությունը) թեմայով: Սակայն, այդուհանդերձ, պետք է նշել, որ նրա աշխատանքները լուսաբանվելու և ամբողջական կերպով ներկայացվելու կարիք ունեն:

Այժմ, երբ այլևս չկան խորհրդային ժամանակաշրջանին բնորոշ գաղափարախոսական սահմանափակումները, անհրաժեշտ ենք համարում նկարագրել և վերլուծել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկություններն ու մեկնաբանությունները, ինչի շնորհիվ արժանվույնս կներկայացնենք հոգեբանության զարգացման մեջ, մասնավորապես՝ հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու գործում Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը և ներդրումը, ինչը, *պատշաճ և ամբողջական ձևով մինչ օրս արված չէ*: Քիչ կարևոր չենք համարում նաև այն հնարավոր հեռանկարների մատնանշումը, որոնք կարող են ստեղծվել հոգեբանության արդի տարբեր խնդիրները Ա.Ի. Միրաքյանի նոր մոտեցման օգնությամբ հետազոտելու ժամանակ:

Թեկնածուական մեր ատենախոսության *արդիականությունը և կարևորությունը* պայմանավորված է վերը թվարկված հանգամանքներով:

Հետազոտության օբյեկտը ընկալման Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հոգեբանությունն է և հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում նրա աշխատանքների դերը:

Հետազոտության առարկան հանդիսանում է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները, առանձնահատկությունները, ընկալման հիմնական տեսությունների հետ

համեմատական վերլուծությունը և հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հնարավոր զարգացումները:

Հետազոտության վարկածը: Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում օգտագործվող ոչ արգասիքային մոտեցումը, հնարավորություն է ընձեռում դուրս գալ հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու սահմաններից՝ նախադրյալներ ստեղծելով հոգեբանության այլ բնագավառներում նոր ուսումնասիրություններ կատարելու համար:

Հետազոտության նպատակը՝ համակարգված և ամբողջական ձևով ցույց տալ Ա.Ի. Միրաքյանի գիտական ժառանգությունը, բացահայտել և արժանվույնս գնահատել հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում նրա ներդրումը, ինչպես նաև ցույց տալ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցման կիրառման հնարավորությունների շրջանակը:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Համառոտ կերպով ցույց տալ Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համատեքստում:
2. Ուսումնասիրել Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին և հոգեկան արտացոլման նրա հայեցակարգի ստեղծման նախադրյալները:
3. Հետազոտել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական դրույթները:
4. Համեմատական վերլուծություն անցկացնել ընկալման հոգեբանության հիմնական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության միջև:
5. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մոտեցման կիրառելիության հեռանկարները ցույց տալու համար հետազոտել և վերլուծել Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքները:
6. Հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով) և կրթական ոլորտում ցույց տալ ու մեկնաբանել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների և ոչ արգասիքային մոտեցման կիրառման հեռանկարները:

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը: Աշխատանքում որպես մեթոդաբանական հիմք է ընդունվել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հայեցակարգը (Ա.Ի. Միրաքյան): Այն օգտագործվել է ընկալման հոգեբանության հիմնական տեսություններում արգասիքային մոտեցման սահմանափակումները ցույց տալու նպատակով և Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքները վերլուծելու համար:

Աշխատանքում նաև օգտագործվել է սուբյեկտ-անձնային մոտեցումը (Բ.Գ. Անանև, Ա.Վ. Բրուշլինսկի, Դ.Բ. Բոգոյավլենսկայա, Կ.Վ Կարպինսկի), ինչի շնորհիվ հնարավոր եղավ ամբողջական ձևով ցույց տալ և վերլուծել Ա.Ի.

Միրաքյանի անձը ու գիտական գործունեության հոգեբանական նախադրյալները:

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները.**

- Կենսագրական մեթոդ. այն անհրաժեշտ է եղել Ա.Հ. Միրաքյանի՝ որպես գիտնականի, հոգեբանական որակների նախադրյալները և ձևավորման պայմանները բացահայտելու համար:
- Գործունեության արդյունքների վերլուծության մեթոդ. այն հնարավորություն ընձեռեց ուսումնասիրելու Ա.Հ. Միրաքյանի անցած գիտական ուղին, որը արտացոլված է նրա ատենախոսություններում, մենագրություններում և հոդվածներում;
- Հարցազրույցի մեթոդ. օգտագործվել է գիտնականի աշակերտներից, հետևորդներից և ընտանիքի անդամներից, նրա կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ լրացուցիչ տվյալներ հավաքելու համար:
- Համեմատական վերլուծության մեթոդ. այն թույլ է տվել բացահայտելու ընկալման ավանդական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունների տարբերությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Ամբողջականորեն ներկայացվում է Ա.Հ. Միրաքյանի գիտական գործունեությունը՝ ներառելով նրա անցած գիտական ուղին, որի արդյունքում բացահայտվում են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ձևավորման նախադրյալները:
2. Վերլուծվում և ամփոփվում է Ա.Հ. Միրաքյանի աշակերտների (Հ.Ա. Ադամյան, Ա.Ն. Անդրեև, Ս.Լ. Արտեմենկով, Ա.Մ. Զալցման, Վ.Հ. Կոզլով, Է.Հ. Կոչուրովա, Ն.Լ. Մորինա, Գ.Վ. Շուկովա, Վ.Հ. Պանով, Տ.Ս. Պոգորելցևա, Ն.Վ. Պոդլեսնովա, Ի.Լ. Ռուդենկո, Ա.Ա. Քանանյան և ուրիշներ) տեսական և փորձարարական հետազոտությունները, որոնցում բացահայտվում են ճանաչողական տարբեր մոդալականությունները հետազոտելու գործում ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների կիրառման հնարավորությունները:
3. Ընկալման հիմնական տեսությունների և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության միջև համեմատական վերլուծություն է անցկացվել, որի արդյունքում վեր են հանվել և ընդգծվել վերջինիս առանձնահատկությունները և հոգեկան արտացոլման հայեցակարգի զարգացման գործում Ա.Հ. Միրաքյանի ներդրումը:
4. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական սկզբունքների և ոչ արգասիքային մոտեցման համատեքստում ցույց է տրվում

հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով) և կրթական ոլորտում դրանց օգտագործման հեռանկարները:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Հոգեկան արտացոլման խնդրին անդրադարձել են հոգեբանական տարբեր տեսություններ (ընկալման օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող մոտեցումներ, ընկալման կոնստրուկտիվիստական տեսություն, ընկալման նեյրոֆիզիոլոգիական տեսություն և այլն), սակայն, այդ խնդրի վերաբերյալ Ա.Ի. Միրաքյանի մոտեցումը էականորեն տարբերվում է նախորդներից՝ իրենում ներառելով հետազոտման լրիվ նոր մոտեցում:

Նրա աշխատանքները գլխավորապես լուսաբանվել են իր աշակերտների և համախոհների կողմից (Վ.Ի. Պանով, Ռ.Մ. Նաղդյան, Ռ.Հ. Պողոսյան, Ն.Լ. Մորինա, Գ.Վ. Շուկովա, Վ.Ի. Կոզլով, Ա.Մ. Զալցման, Հ.Ա. Ադամյան և այլք), ովքեր, հիմնականում դա անում էին ընկալման առանձին մոդալականությունները (Հ.Ա. Ադամյան՝ ախրոմատիկ գույների ընկալում, Ա.Մ. Զալցման՝ լսողության որոշ առանձնահատկություններ և այլն) հետազոտելու միջոցով: Այստեղ պետք է առանձնացնել Վ.Ի. Պանովի և Ռ.Մ. Նաղդյանի աշխատանքները:

Վ.Ի. Պանովը էկոհոգեբանության տեսությունը կառուցելիս, իբրև մեթոդաբանական հիմք է վերցնում Ա.Ի. Միրաքյանի ոչ արգասիքային մոտեցումը և տրանսցենդենտալ հոգեբանության հիմնական սկզբունքները, իսկ Ռ.Մ. Նաղդյանը, հոգեկան արտացոլման համարժեքության խնդիրը բացահայտելու համար, որպես ելակետային տվյալ է վերցնում «Ոչինչ» (Ничто) հասկացությունը, որը բնորոշում է մինչ արտացոլումը գոյություն ունեցող իրականությունը և ընկած է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանության ձևավորման հիմքում:

Այդուհանդերձ, թե՛ Վ.Ի. Պանովը (էկոհոգեբանություն) և թե՛ Ռ.Մ. Նաղդյանը (իրականության հոգեկան արտացոլում) իրենց մոտեցումները կառուցելիս օգտվել են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցումից և այդ հայեցակարգի հիմնական դրույթներից:

Գ.Վ. Շուկովան զուգահեռներ է անցկացրել հոգեկան արտացոլման գործընթացը մեկնաբանող երեք հիմնական մոտեցումների միջև. իմացաբանական, գոյաբանական և տրանսցենդենտալ:

Անհրաժեշտ է նաև նշել մտածողության հետազոտման գործում Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի հետևորդ Ռ.Հ. Պողոսյանի առանձնահատուկ տեսական վերլուծությունը, որում նշվում էր, որ հոգեբանությունում այդ խնդրի մեկնաբանությունները բացառապես կատարվել են արգասիքային մակարդակի վրա և առաջարկվում էր այդ խնդիրը ուսումնասիրել ոչ արգասիքային մոտեցման միջոցով: Վերոնշյալ մեկնաբանությունը կարելի է համարել ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կիրառելիության

սահմանների ընդլայնման ևս մեկ փորձ, ինչը, իհարկե, կարիք ունի մանրակրկիտ վերլուծության և բազմակողմանի ուսումնասիրության:

Սակայն, այսքանով հանդերձ, պետք է փաստել, որ հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգը լիարժեք և ամբողջական ձևով ուսումնասիրված չէ (որտեղ նշված կլիներ Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղին, ինչում թաքնված են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալները): Մեր կարծիքով, ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առանձնահատկությունները և ոչ արգասիքային մոտեցումը առավել ամբողջական և ընդգծված ցույց տալու համար անհրաժեշտ է նաև այդ հայեցակարգի և ընկալման հիմնական տեսությունների միջև համեմատական վերլուծություն անցկացնել (ինչը մինչ օրս ամբողջական ձևով արված չէ), որը թույլ կտա համեմատության մեջ ներկայացնել հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգի էական տարբերությունները և դրանով իսկ ընդգծված ձևով նշել հոգեբանության մեջ նրա ներդրումը:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Աշխատանքում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ոչ արգասիքային մոտեցումը և այդ հայեցակարգին բնորոշ աֆիզիկալ մտածելակերպը կարող են օգտագործվել արդի հոգեբանության այլ ոլորտներում (ինչպես ցույց ենք տվել էկոհոգեբանության՝ Վ.Ի. Պանով, հոգեկան արտացոլման համարժեքության հետազոտությունների՝ Ռ.Մ. Նաղդյան օրինակներով)՝ տեսական տարբեր խնդիրները ձևակերպելու, մեկնաբանելու և լուծելու ժամանակ:

Հետազոտության կիրառական նշանակությունը:

1. Աշխատանքում ներառված վերլուծությունները կարող են օգտագործվել հոգեթերապիայում՝ հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքները ոչ արգասիքային մոտեցման միջոցով մեկնաբանելու համար, ինչպես նաև ուսուցման գործընթացը կազմակերպելիս գոյություն ունեցող որոշ սահմանափակումներից (ինչը պայմանավորված է արգասիքային, ֆիզիկալ մտածելակերպով) ձերբազատվելու համար:

2. Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «Հոգեբանության պատմություն», «Ընդհանուր հոգեբանություն» և հոգեկան արտացոլմանը վերաբերող դասընթացներում, ինչպես նաև «Հայ հոգեբանական մտքի զարգացման պատմություն» հատուկ դասընթացներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ա.Ի. Միրաքյանի աշխատանքները մեծացրեցին հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու, մեկնաբանելու և հասկանալու սահմանները:

2. Ընկալման հոգեբանության հիմնական տեսություններում (օբյեկտային և սուբյեկտային կողմնորոշում ունեցող, կոնստրուկտիվիստական, նեյրոֆիզիոլոգիական, ինչպես նաև Ռուսաստանի հոգեբաններ՝ Բ.Գ. Անանևի,

Ա.Ն. Լեոնտևի, Ս.Դ. Սմիրնովի և Վ.Ա. Բարաբանշչիկովի ընկալման տեսություններ) ի տարբերություն ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության, օգտագործվում է արգասիքային մոտեցում:

3. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը ոչ միայն նորովի է հետազոտում և մեկնաբանում հոգեկան արտացոլման գործընթացը, այլ նաև նախադրյալներ է ստեղծում արդի հոգեբանության տարբեր բնագավառներում հոգեկան երևույթները ոչ արգասիքային մոտեցման միջոցով հետազոտելու և մեկնաբանելու համար:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Ատենախոսությունում ներառված գիտական դրույթները, վերլուծությունները, հետևություններն ու եզրահանգումները հիմնավորվում են աշխատանքում կիրառված մեթոդների, բազմաթիվ գիտական աղբյուրների օգտագործման և դրանց վերլուծության միջոցով, ինչպես նաև կենսագրական, գիտական փաստերի կիրառմամբ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները, գործնական և տեսական առաջարկությունները ներկայացվել են զեկույցների և հրապարակումների տեսքով. «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով (ԵՊՀ 2011), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային IV գիտաժողով (ԵՊՀ 2013), Ութերորդ տարեկան գիտաժողով (ՀՌՀ 2013), Գիտական և պրակտիկ նյութերի X միջազգային կոնֆերանս (Անգլիա 2014), «Գիտության և կրթության զարգացման արդի հիմնախնդիրները» միջազգային գիտական կոնֆերանս (ՀՌՀ 2014), ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին և փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին նվիրված, երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողով (ԵՊՀ 2014), «Արդիականության մարտահրավերները, փիլիսոփայության և հոգեբանության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով, նվիրված ֆակուլտետի 50-ամյակին (ԵՊՀ 2014), Իններորդ տարեկան գիտաժողով (ՀՌՀ 2014), «Հումանիտար և հասարակական գիտություններ», լրաբեր (ՀՌՀ 2015), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային V գիտաժողով (ԵՊՀ 2015):

Աշխատանքում օգտագործված *«արգասիքային», «ոչ արգասիքային», «ֆիզիկալ»* և *«աֆիզիկալ»* եզրույթները համապատասխանաբար համարժեք են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում օգտագործված *«продуктный», «непродуктный», «физикальный»* և *«афизикальный»* եզրույթներին:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և 2 հավելվածից: Աշխատանքի ծավալը

համակարգչային շարվածքով 187 էջ է: Գրականության ցանկը կազմում է 213 աղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակը, խնդիրները, մեթոդաբանական և տեսական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, ինչպես նաև ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, հետազոտության փորձաքննությունը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ծագման նախադրյալները և ձևավորումը» գլուխը սկսվում է հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության համառոտ ակնարկով, որում վերլուծվում են V-րդ դարից սկսած (հայոց գրերի ստեղծումից հետո՝ 404-405թթ.) հայ մտածողների այն աշխատանքները, որոնցում այս կամ այն կերպ շոշափվել են հոգեբանությանը վերաբերող հարցեր: Ատենախոսության այդ հատվածում չեն ներառվել այն հայ հոգեբանները, ովքեր մինչ այսօր աշխատում և ստեղծագործում են, քանի որ նրանց աշխատանքների դերը՝ այդ դինամիկայի պամաններում, ամբողջական և ամփոփիչ կերպով հնարավոր կլինի ներկայացնել միայն ապագայում:

Աշխատանքի այս ենթագլխում ներառված են հետևյալ հայ մտածողների աշխատանքները. V-XII դդ.՝ Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Եղիշե, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Երզնկացի, Մխիթար Հերացի. XIV-XVIII դդ.՝ Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Որոտնեցի, Առաքել Սյունեցի, Սիմեոն Ջուղայեցի. XIX դ.՝ Ստեփանոս Նազարյանց, Միքայել Նալբանդյան. XIX-XX դդ.՝ Գ. Էդիլյան, Մ. Մազմանյան, Հ. Թութունջյան, Մ. Երիցյան, Ի. Գյոդակյան, Գ. Կանեցյան, Է. Ալեքսանդրյան, Ա. Հակոբյան, Լ. Վարդանյան, Կ. Ոսկանյան, Ն. Քոչարյան, բժշկական հոգեբանություն՝ Ա. Մեհրաբյան, Լ. Հովհաննիսյան, իրավաբանական հոգեբանություն՝ Ս. Արզումանյան, սպորտի հոգեբանություն՝ Ա. Լալայան, Ա. Կոստանյան և ուրիշներ: Կատարված վերլուծությունը թույլ է տալիս հայ հոգեբանական մտքի զարգացման գործում ընդգծված ձևով նշել Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների դերը և նշանակությունը:

Այնուհետև, աշխատանքում ներկայացվում է Ա.Ի. Միրաքյանի անցած գիտական ուղու վերլուծությունը, որում ցույց է տրվում, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալներ են հանդիսացել հոգեկան արտացոլման գործընթացը ավանդական

մոտեցումների միջոցով հետազոտելու սահմանափակումները, որոնց հիմնական պատճառը թաքնված էր հետազոտողների ֆիզիկալիստական մտածելակերպի մեջ:

Ա.Ի. Միրաքյանի աշխատանքների վերլուծությունը, որոնք վերաբերում են գիտության տարբեր ոլորտներում տարածության ընկալման ուսումնասիրման առանձնահատկություններին, ցույց տվեց, որ հատկապես հենց այդ հետազոտություններում են նման խորությամբ և ծավալով առաջին անգամ բացահայտվել հոգեբանությունում արգասիքային մոտեցման սահմանափակումների նշանակությունը և հետևանքները:

Հաջորդ ենթագլխում ներկայացված է ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը և այդ հայեցակարգի առանձնահատկությունների վերլուծությունը: Աշխատանքում նշվում է, որ հոգեկան արտացոլման առաջացման խնդրի հետազոտման գործում ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության գլխավոր յուրահատկություններից մեկը հանդիսանում է լրիվ նոր՝ աֆիզիկալ մոտեցման օգտագործումը, ինչը հիմնված է այն բանի վրա, որ այդ խնդրի վերլուծության համար իբրև ելակետային տվյալներ չեն վերցվում հետազոտվող օբյեկտների արդեն արտացոլված հատկանիշները և հատկությունները, այլ օգտագործվում են արտացոլված օբյեկտների բնութագրերի նկատմամբ անտարբեր (ինդիֆերենտ) հասկացություններ: Հենց նման մոտեցումը թույլ տվեց ընկալման բոլոր մոդալականություններում բացահայտել ընկալման առաջացնող գործընթացի առավել ընդհանուր սկզբունքները:

Աֆիզիկալ մոտեցումը Ա.Ի. Միրաքյանին թույլ տվեց բացահայտել հոգեկան արտացոլում առաջացնող գործընթացի խորքային սկզբունքների ոչ յուրահատուկ համակարգը. անիզոտրոպ հարաբերությունների կազմավորման սկզբունքը, անիզոտրոպության կառուցվածքա-գործընթացային սկզբունքը, համաներկայացվածության և բազմաֆունկցիոնալության սկզբունքը, որոնց շնորհիվ իրականանում է հոգեկան արտացոլման առաջացնող գործընթացը: Աշխատանքի այդ հատվածում ներկայացվել և վերլուծվել են նաև Ա.Ի. Միրաքյանի ղեկավարությամբ կատարված ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների և օրինաչափությունների փորձարարական հետազոտությունները (Վ.Ի. Պանով, Ս.Լ. Արտեմենկով, Վ.Ի. Կոզլով, Ն.Վ. Պոդլեսնովա, Ա.Ն. Անդրեև, Ն.Լ. Մորինա, Տ.Ս. Պոգորելցեվա, Է.Ի. Կոչուրովա, Ա.Մ. Զալցման, Հ.Ա. Ադամյան, Ն.Լ. Ռուդենկո, Ա.Ա. Քանանյան, Գ.Վ. Շուկովա):

Առաջին գլխի եզրափակիչ ենթագլխում վերլուծվում են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանական հիմքերը: Մասնավորապես, ընդգծվում է Ա.Ի. Միրաքյանի հիմնական մեթոդաբանական դիրքորոշումը, համաձայն որի, հոգեկանի ուսումնասիրումը պետք է սկսել «Ոչինչ» («Ничто») հասկացության մշակումից, ինչը արտահայտում է մինչ

արտացոլման իրականությունը և որում չկա ու չի կարող լինել մարդու գիտակցության որևիցե ֆենոմեն: Այդպիսի մոտեցումը անհրաժեշտ էր, որպեսզի հետազոտողը հնարավորություն ունենար հասկանալու հոգեկանի առաջացման սկզբունքները և օրինաչափությունները, որոնք գոյություն ունեն մինչ արտացոլումը իրականությունում և, որոնց հետքերը պետք է դրսևորվեն արդեն ընկալված իրականությունում:

Երկրորդ՝ «Արգասիքային մոտեցման սահմանափակումների առանձնահատկությունները ընկալման հիմնական տեսություններում» գլխում, ոչ արգասիքային մոտեցման տեսանկյունից, վերլուծության են ենթարկվել ընկալման օբյեկտային կողմնորոշում ունեցող տեսությունները (ստրուկտուրալիզմ, գեշտալտ հոգեբանություն, Ջ. Գիբսոնի էկոլոգիական մոտեցում, ինֆորմացիոն մոտեցում), ընկալման սուբյեկտային կողմնորոշում ունեցող տեսությունները (ֆունկցիոնալիզմ, կոգնիտիվ մոտեցում), ինչպես նաև կոնստրուկտիվիստական մոտեցումը, նեյրոֆիզիոլոգիական մոտեցումը և Ռուսաստանի հոգեբանների ընկալման տեսությունները (Բ.Գ. Անանև, Ա.Ն. Լեոնտև, Ս.Դ. Սմիրնով, Վ.Ա. Բարաբանշչիկով):

Վերոնշյալ վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունում, ի տարբերություն ընկալման այլ տեսությունների, հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելիս օգտագործվում է նոր՝ ոչ արգասիքային մոտեցում: Սակայն, նրանց աշխատանքները հիմնականում նվիրված էին ընկալման կոնկրետ մոդալականության արտացոլման գործընթացին, ինչը թույլ չէր տալիս բազմակողմանի և ամբողջական կերպով ցույց տալ արգասիքային մոտեցման սահմանափակումները:

Աշխատանքում կատարված վերլուծությունը թույլ տվեց հաստատել այն ենթադրությունը, որ ի տարբերություն ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության, ընկալման վերը բերված տեսություններում, հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու ժամանակ օգտագործվում է տվյալ տեսությանը հատուկ արգասիքային մոտեցում: Օրինակ. ընկալման օբյեկտային կողմնորոշում ունեցող մոտեցումների համար ելակետային տվյալներ են ծառայել մարդու կողմից արդեն ընկալված օբյեկտների հատկությունները և հատկանիշները: Ընկալման սուբյեկտային կողմնորոշում ունեցող տեսություններում, իբրև ելակետային հիմքեր են հանդիսացել մարդու նախկին փորձը և ներքին վիճակը:

Այս գլխում ցույց է տրվում, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանությունը, հակառակ ընկալման վերոնշյալ ավանդական տեսությունների, հոգեկան արտացոլման գործընթացը հետազոտելու ժամանակ, չի հիմնվում ուսումնասիրվող օբյեկտների արդեն արտացոլված հատկությունների և հատկանիշների վրա, այլ օգտագործում է, ինչպես վերը նշվեց, անտարբեր (ինդիֆերենտ) հասկացություններ, որոնք թույլ են տալիս

բացահայտել հոգեկան արտացոլում առաջացնող գործընթացի սկզբունքները, որոնք առկա են բնության մեջ և որոնք անկախ են հոգեկան ֆենոմենների որևէ դրսևորումից:

Այս կերպ՝ ոչ արգասիքային մոտեցման միջոցով հոգեկան արտացոլման գործընթացի հետազոտությունը Ա.Ի. Միրաքյանին թույլ տվեց տվյալ հարցը դիտարկել այլ կողմից, մասնավորապես, ոչ թե արտաքին օբյեկտների «պատճենահանում» կամ մարդու ներքին վիճակի և սուբյեկտիվ փորձի օպերացիաներ, այլ որպես առաջացնող գործընթաց:

Ատենախոսության եզրափակիչ՝ **«Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացման հեռանկարները Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքներում» երրորդ գլխում** ներկայացված են Ա.Ի. Միրաքյանի մոտեցման կիրառման հնարավորությունները և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացման հեռանկարները: Վերոնշյալ խնդիրների լուծման համար վերլուծվել են Վ.Ի. Պանովի և Ռ.Մ. Նաղդյանի աշխատանքները: Նման ընտրությունը կատարվել է այն պատճառով, որ նշված հեղինակների աշխատանքներում ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացումը ներկայացված է առավել ամբողջական և հիմնավորված (դոկտորական ատենախոսություններ, մենագրություններ և այլն):

Այս գլխի առաջին ենթագլուխը նվիրված է հոգեկանի զարգացման էկոհոգեբանական տեսությանը (Վ.Ի. Պանով): Այդ հայեցակարգը մշակելիս հեղինակը օգտագործում է աֆիզիկալ մտածելակերպը և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության առաջացնող սկզբունքները, ինչը հեղինակին թույլ է տալիս այդ խնդրի լուծման գործում ցուցաբերել ոչ արգասիքային մոտեցում: Էկոհոգեբանությունում իբրև մեթոդաբանական հիմք է հանդիսանում «մարդ – միջավայր (արտաքին, ներքին)» կամ, ավելի լայն համատեքստում վերցված, «հոգեկան ակտիվության սուբյեկտ (մարդ կամ այլ էակ) – շրջակա միջավայր (այդ թվում նաև այն ներկայացնող սուբյեկտները)» համակարգային հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերությունների բաղադրամասերի միջև փոխգործունեության ձևերը: Նման մոտեցման շնորհիվ հնարավոր եղավ ցույց տալ, որ փոխգործունեության այդպիսի տեսակները կրում են համապարփակ բնույթ և այդպիսով լիովին կիրառելի են մարդու և շրջակա միջավայրի տարբեր տեսակների փոխգործունեությունը վերլուծելու համար: Բացի այդ, հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցումը, ի տարբերություն ավանդական հոգեբանության, որտեղ հոգեկանի ամեն մի ֆենոմենի համար ստեղծվել է իր սեփական առանձին տեսությունը, թույլ է տալիս տարբեր հոգեկան ֆենոմենները դիտարկել որպես հոգեկանի՝ իբրև մեկ ամբողջության դրսևորումներ:

Էկոհոգեբանական մոտեցումը օգտագործվել է հոգեկան իրականության կեցության կազմավորումը ուսումնասիրելու համար, որն իր դրսևորվումն է

գտնում տարբեր ֆենոմենների միջոցով: Այդ ֆենոմեններից հետազոտվել են գլխավորապես՝ սուբյեկի կազմավորումը, ճարտարապետական միջավայրի խորհրդանշական ընկալումը, հոգեկան վիճակները և դրանց բնական (գոյաբանական) դինամիկան, տաղանդի զարգացումը, ուսանողական խմբերում միջանձնային փոխհարաբերությունները, էկոլոգիական անբարենպաստ միջավայրում երեխաների ինտելեկտուալ զարգացումը և այլն:

Արդյունքում Վ.Ի. Պանովը գալիս է այն ենթադրության, որ հոգեկանի զարգացման էկոհոգեբանական մոտեցումը կարող է օգտագործվել ոչ միայն հոգեկան տարբեր ֆենոմենները (որպես տեսական նախադրյալներ և կառուցվածքներ) և դրանց ծագումն ուսումնասիրելու, այլ նաև հոգեկանի հետազոտմանն ուղղված տարբեր տեսական մոտեցումների մեթոդաբանական նախադրյալների վերլուծության համար:

Հաջորդ ենթագլխում վերլուծվում են Ռ.Մ. Նաղդյանի աշխատանքները, որոնք հիմնականում վերաբերում են հոգեկան արտացոլման համարժեքության խնդրին: Այդ խնդիրը մեկնաբանելու համար հեղինակն օգտագործում է այն փիլիսոփայա-մեթոդաբանական դրույթները, որոնք առաջարկում էր Ա.Ի. Միրաքյանը, մասնավորապես, «Ոչինչ» («Ничто») հասկացությունը, որն ենթադրում էր մինչ արտացոլման իրականությունը:

Հետագայում Ռ.Մ. Նաղդյանը մանրակրկիտ վերլուծելով Ա.Ի. Միրաքյանի փիլիսոփայա-մեթոդաբանական հայացքները գալիս է այն եզրակացության, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հիմքերը մշակելիս Ա.Ի. Միրաքյանը կիրառել է մետաֆիզիկական մտածելակերպ, իսկ տրանսցենդենտալ հոգեբանությունն ունի մետաֆիզիկական հիմքեր:

«Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության կիրառման հեռանկարները արդի ուսուցման համակարգում» ենթագլխում ներկայացվում և վերլուծվում են գիտության տարբեր ոլորտները ներկայացնող հանճարեղ գիտնականների անցած գիտական ուղիները (Ի. Նյուտոն, Ա. Էյնշտեյն, Կ. Ցիոլկովսկի, Դ. Մենդելեև, Չ. Դարվին, Կ. Լիննեյ, Բ. Գեյթս, Ջ. Նեշ) և նրանց բացահայտումների համար իբրև հիմք ծառայող հնարավոր նախադրյալները: Նշված գիտնականները, ապրելով և ստեղծագործելով տարբեր ժամանակաշրջաններում, ունեին մի կարևոր ընդհանրություն. նրանք, դպրոցական տարիներին աչքի չէին ընկնում իրենց առաջադիմությամբ, ավելին՝ համարվում էին վատ (անբավարար) սովորողներ: Նրանց հանճարեղ հայտնագործությունները ոչ այնքան գիտությունում առկա փաստերի վերլուծության և համադրման արդյունք էին, որքան՝ ֆանտազիաների և ինսայթի:

Աշխատանքում ցույց է տրվում, որ վերոնշյալ անձանց հատուկ էր այլ մտածելակերպ, որը տարբերվում է իշխող ֆիզիկալիստական մտածելակերպից: Այդ իսկ պատճառով նրանց բացահայտումների համար որպես ելակետային հիմքեր չեն հանդիսացել գիտության անմիջական

տվյալները: Դրանում է թաքնված հիմնական պատճառը, որ նրանց բացահայտումները գրեթե զրկված էին դետերմինացիոն կապերից, իսկ գիտական նվաճումների ուղիները շատ մարդկանց համար անսովոր էին և անհասկանալի: Ինչպես և ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության հետևորդները, վերոնշյալ գիտնականները նույնպես ցուցաբերում էին աֆիզիկալ մտածելակերպ, ինչը կարելի է դիտարկել որպես նրանց կողմից ոչ արգասիքային մոտեցման կիրառում:

Նրանց բացահայտումների նախադրյալների ուսումնասիրությունները և անցած գիտական ուղու վերլուծությունը թույլ տվեց առաջ քաշել արդի կրթական համակարգում ուսուցանվողների մոտ աֆիզիկալ մտածելակերպի ձևավորման համար նոր մեթոդների մշակման նպատակահարմարության հարցը, ինչը կապահովի տարբեր գիտական խնդիրները լուծելիս ոչ արգասիքային մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը եզրափակվում է բազմաթիվ հոգեբանների կողմից ընդունված հոգեթերապիայի երեք հիմնական ուղղությունների տեսական հետազոտություններով. հոգեդինամիկ, ֆենոմենոլոգիական (էկզիստենցիալ-հումանիտար) և վարքային (կոգնիտիվ-վարքային): Աշխատանքում կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ վերը թվարկված ուղղություններին հատուկ է արգասիքային մոտեցում: Այդ ուղղություններում, հոգեբանական տարբեր խնդիրների հետազոտման և դրանց ծագման պատճառները հասկանալու համար որպես ելակետային տվյալներ ծառայում էին ինքնին հոգեբանական խնդիրները և դրանց դրսևորումները (ախտանիշներ, համախտանիշներ): Այդուհանդերձ, հոգեթերապևտներին չէր հաջողվում բացահայտել հոգեբանական խնդիրների առաջացման հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, քանի որ արդյունքում (տվյալ դեպքում՝ հոգեբանական խնդիրներում և դրանց դրսևորումներում) ծագման գործընթացն արդեն ավարտված էր: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, հոգեվերլուծության օրինակով, փորձ է արվում տվյալ խնդիրն ուսումնասիրել Ա.Ի. Միրաքյանի ոչ արգասիքային մոտեցման օգնությամբ: Առաջարկվում է, ինչպես և հոգեկան արտացոլման գործընթացի ուսումնասիրման ժամանակ, իբրև ելակետային տվյալներ չվերցնել հետազոտվող երևույթի ֆենոմենները (արգասիքները): Ենթադրվում է, որ անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը կարող է ընկած լինել նաև հոգեբանական խնդիրների ձևավորման հիմքում: Նման դրսևորումներ (անիզոտրոպ հարաբերությունների ստեղծում) ակնհայտ կերպով արտահայտված են նաև հոգեվերլուծությունում, երբ հոգեբանական տարբեր խնդիրների առաջացման պատճառները հանդիսանում են հոգեկանի երեք ինստանցիաների միջև որոշակի հարաբերությունների խախտման արդյունք (խոսքը «Իդ» - ի, «Ես» - ի և «ԳերԵս» - ի մասին է, որոնք, ըստ էության, իրենցից ներկայացնում են անիզոտրոպության տարատեսակներ):

Բացի այդ, Է. Բլեյլերը, իսկ հետո արդեն Զ. Ֆրեյդը մատնանշում էին այն փաստը, որ ցանկացած մարդու բնորոշ է միևնույն օբյեկտի նկատմամբ ունենալ երկվալենտ (Ա.Ի. Միրաքյանի տերմինաբանությամբ՝ անիզոտրոպ) զգացումներ, որոնք գտնվում են համապատասխան հարաբերակցության մեջ: Դրանց օպտիմալ հարաբերակցության աստիճանի խախտումը, նրանց կարծիքով, կարող է դառնալ հոգեբանական խնդիրների առաջացման պատճառ:

Այդ կերպ, ինչպես Է. Բլեյլերը, այնպես էլ Զ. Ֆրեյդը, չնայած այն բանին, որ հոգեբանական խնդիրների առաջացումը բացատրում էին տրանսցենդենտալ հոգեբանության տերմինաբանության համաձայն՝ անիզոտրոպ հարաբերությունների խախտման միջոցով (մի դեպքում՝ որպես «Իդ»-ի, «Ես»-ի և «ԳերԵս»-ի միջև, մյուս դեպքում՝ երկվալենտ զգացումների օպտիմալ հարաբերակցության աստիճանի խախտում), միևնույն ժամանակ այդ հետազոտողները ցուցաբերում էին արգասիքային մոտեցում, հետագայում փորձելով իրենց վերլուծությունները կառուցել հոգեբանական խնդիրների անմիջական տվյալների վրա, որոնք հանդիսանում էին որոշակի խորքային հոգեբանական գործընթացի արգասիքներ:

Այդ տեսական հետազոտությունները կատարված են միանգամայն գիտական տրամաբանության շրջանակներում և, մեր կարծիքով, իրենցից ներկայացնում են ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության զարգացման հնարավոր հեռանկարը: Միայն թե այդ տեսական ուսումնասիրությունները կարիք ունեն փորձարարական բազմակողմանի հաստատումների, ինչը կարող է հանդիսանալ մեր հետագա հետազոտությունների առարկա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայ հոգեբանական մտքի զարգացման պատմության մեջ հոգեկան արտացոլման խնդիրը նման ծավալով և խորությամբ առաջին անգամ հետազոտվել է Ա.Ի. Միրաքյանի աշխատանքներում, ինչը հայկական արդի գիտական հոգեբանության գրականության մեջ ներկայացված չէ:

2. Ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության ստեղծման նախադրյալներ են հանդիսացել հոգեկան արտացոլման բազմաֆունկցիոնալ և ճկուն հատկությունները ավանդական մոտեցման միջոցով հետազոտելու և հասկանալու մեթոդների սահմանափակությունը, ինչպես նաև հետազոտությունների ժամանակ ֆիզիկալիստական մտածելակերպի օգտագործումը, որը թույլ չէր տալիս բացահայտել հոգեկան արտացոլման ստեղծող գործընթացի սկզբունքները և օրինաչափությունները:

3. Ընկալման հիմնական բոլոր տեսություններում հոգեկան արտացոլման գործընթացի վերլուծությունները և մեկնաբանությունները

կառուցվում են արգասիքային մոտեցման վրա, ինչը թույլ չի տալիս բացահայտել հոգեկան արտացոլում առաջացնող գործընթացի սկզբունքները և օրինաչափությունները:

4. Ա.Ի. Միրաքյանի հետևորդների աշխատանքների (էկոհոգեբանություն և հոգեկան արտացոլման համարժեքության խնդիր) վերլուծությունը թույլ տվեց փաստել այն հանգամանքը, որ ընկալման տրանսցենդենտալ հոգեբանության սկզբունքների կիրառումը հնարավոր է նաև հոգեբանության այլ ոլորտներում:

5. Հանճարեղ մարդկանց մտածողության զարգացման առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ ուսուցանվողների մոտ աֆիզիկալ մտածելակերպի ձևավորումը կարող է նպաստել նրանց մոտ յուրահատուկ ինտելեկտուալ ընդունակությունների դրսևորման նոր հնարավորությունների ստեղծման գործին, որն իրագործելու համար անհրաժեշտ է համապատասխան հոգեբանա-մանկավարժական մեթոդների մշակում:

6. Հոգեթերապիայի երեք գլխավոր ուղղություններում (հոգեդինամիկ, ֆենոմենոլոգիական (էկզիստենցիալ-հումանիտար) և վարքային (կոգնիտիվ-վարքային)) օգտագործվում է արգասիքային մոտեցում՝ իբրև ելակետային տվյալներ վերցվում են ինքնին հետազոտվող հոգեբանական խնդիրները և դրանց դրսևորումները, ինչը թույլ չի տալիս բացահայտել այդ խնդիրները ստեղծող սկզբունքները և օրինաչափությունները:

7. Հոգեթերապիայում (հոգեվերլուծության օրինակով), հոգեբանական խնդիրների առաջացման հիմնարար սկզբունքները ուսումնասիրելու համար, աֆիզիկալ մոտեցման և անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքի կիրառումը կարող է հոգեբանության այդ ոլորտում բերել այլ հետազոտություններ անցկացնելու նոր հեռանկարների բացմանը:

Վերոնշյալը թույլ է տալիս պնդելու, որ Ա.Ի. Միրաքյանի գիտական ժառանգության արդյունքների օգտագործումը ոչ միայն հնարավորություն է ընձեռում ավելի խոր մակարդակի վրա հետազոտել հոգեկան արտացոլման գործընթացը, այլև նախադրյալներ է ստեղծում արդի հոգեբանության այլ ոլորտների տարբեր բնույթի խնդիրները հետազոտելու համար:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Նաղդյան Ռ.Մ., Եսայան Գ.Ս. Այլ մոտեցում հոգեկան արտացոլման համարժեքությանը: ԵՊՀ, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, միջազգային գիտաժողով: Եր., 2011. էջ 18-21:
2. Եսայան Գ.Ս. Հոգեկան արտացոլման խնդիրը Ա.Ի. Միրաքյանի հայեցակարգում: ԵՊՀ, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, IV-Միջազգային գիտաժողով: Եր., 2013. էջ 74-77:
3. Եսայան Գ.Ս. Ընկալման գործընթացի մեկնաբանությունը ըստ Ա.Ի. Միրաքյանի: ՀՌՀ, Ութերորդ տարեկան գիտաժողով, Եր., 2013. էջ 357-363:
4. Есаян Г.С. Подход А.И. Миракяна к проблемене психического отражения. Materials of the X international scientific and practical conferance, «Prospects of world science», England, 2014. С. 51-53.
5. Եսայան Գ.Ս. Մտածելակերպի խնդիրը Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հոգեբանությունում: ԵՊՀ, Երիտասարդ հոգեբանների միջբուհական գիտաժողով, Եր., 2014. էջ 48-52:
6. Եսայան Գ.Ս. Ընկալման վերաբերյալ հայազգի հոգեբան Ա.Ի. Միրաքյանի աֆիզիկալ՝ ոչ արդյունքային մոտեցումը: ՀՌՀ, Միջազգային գիտաժողով «Կրթության և գիտության զարգացման արդի հիմնախնդիրները», Եր., 2014. էջ 76-81:
7. Եսայան Գ.Ս. Հայ ազգի հոգեբան Ա.Ի. Միրաքյանի կենսագրությունը և գիտական ուղին: ԵՊՀ, Արդիականության մարտահրավերները, փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրները, Եր., 2014, էջ 130-132:
8. Եսայան Գ.Ս. Հոգեկան որոշ գործընթացների մեկնաբանությունը հայազգի հոգեբան Ա.Ի. Միրաքյանի բացահայտումների օգնությամբ: ՀՌՀ, Իններորդ տարեկան գիտաժողով, Եր., 2015. էջ 370-377:
9. Եսայան Գ.Ս. Դասական (դեկարտյան) պարադիգմայի սահմանափակումները առկա ուսուցման համակարգում: ՀՌՀ, Լրաբեր, Հումանիտար և հասարակական գիտություններ, Եր., 2015. էջ 140-149:
10. Եսայան Գ.Ս. Հոգեկան արտացոլման Ա.Ի. Միրաքյանի տրանսցենդենտալ հայեցակարգի առանձնահատկությունները: ԵՊՀ, V - Միջազգային գիտաժողով: Եր., 2015. էջ 104 - 107:
11. Есаян Г.С. Методология трансцендентальной психологии восприятия: за пределами продуктного («кирпичного») подхода. Scientific and practical journal. Academic psychology. «Sociosféra-CZ», 2016. N 3 С. 18 – 23.
12. Есаян Г.С. Особенности трансцендентальной психологии восприятия: новые перспективы для методологии психологии. Современный научный вестник. N 19 (266) 2016. С. 30 – 33.

ЕСАЯН ГОР СУРЕНОВИЧ

ВКЛАД А.И. МИРАКЯНА В РАЗВИТИЕ КОНЦЕПЦИИ ПСИХИЧЕСКОГО ОТРАЖЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 "Общая психология, теория и история психологии, психология личности"

Защита диссертации состоится 8 ноября 2016 г., в 12^{oo} ч. на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогоическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена следующими факторами: 1) до сих пор не были представлены в целостном и систематизированном виде научная деятельность А.И. Миракяна и пройденный им научный путь, 2) с позиции непродуктного подхода не были проанализированны особенности основных теорий восприятия, 3) не был проведен анализ работ последователей А.И. Миракяна, с позиций перспектив развития трансцендентальной психологии восприятия и 4) до сих пор не раскрыты те возможности, которые могут быть выявлены при решении разных задач в современной психологии с помощью непродуктного подхода А.И. Миракяна и принципов трансцендентальной психологии восприятия.

Цель исследования - систематизированно и целостно представить научное наследие А.И. Миракяна, выявить и оценить его вклад в развитие концепции психического отражения, а также показать границы возможностей применения непродуктного подхода трансцендентальной психологии восприятия.

Для достижения цели исследования, были поставлены следующие **задачи:**

1. Кратко представить значение трудов А.И. Миракяна в контексте исторического развития армянской психологической мысли.
2. Изучить генезис научной деятельности А.И. Миракяна и предпосылки создания его концепции психического отражения.
3. Исследовать основные положения трансцендентальной психологии восприятия.
4. Провести сравнительный анализ между основными теориями восприятия с трансцендентальной психологией восприятия.
5. Для выявления возможностей и перспектив применения непродуктного подхода исследовать и проанализировать работы последователей А.И. Миракяна.
6. Показать перспективы применения непродуктного подхода и принципов трансценденталной психологии восприятия в психотерапии (на примере психохоанализа) и в области образования.

Научная новизна исследования.

1. Целостно представлена научная деятельность А.И. Миракяна, включая его биографию и пройденный научный путь, в котором раскрывается особенности формирования предпосылок возникновения трансцендентальной психологии восприятия.

2. Анализируются и обобщаются теоретические и экспериментальные исследования учеников А.И. Миракяна (О.А. Адамян, А.Н. Андреев, С.Л. Артеменков, А.М. Зальцман, В.И. Козлов, Э.И. Кочурова, Н.Л. Морина, Г.В. Шукова, В.И. Панов, Т.С. Погорельцева, Н.В. Подлеснова, И.Л. Руденко, А.А. Хананян и др.), в которых раскрываются возможности применения принципов трансцендентальной психологии восприятия в разных модальностях.

3. Проведен сравнительный анализ между основными теориями восприятия и трансцендентальной психологией восприятия, что позволило подчеркнуть особенности концепции трансцендентальной психологии восприятия и вклад А.И. Мирикяна в развитие концепции психического отражения.

4. В контексте непродуктного подхода и основных принципов трансцендентальной психологии восприятия показываются перспективы ее применения в психотерапии (на примере психоанализа) и образовательной системе.

Теоретическая значимость работы. Анализ, проведенный в работе, показывает, что новый, непродуктный подход трансцендентальной психологии восприятия и афизикальный образ мышления, необходимые для реализации данной концепции, могут быть использованы в разных областях современной психологии при формулировке и решении теоретических задач (например, как это было показано в исследованиях по экопсихологии В.И. Панова или при решении проблемы адекватности психического отражения, согласно исследованиям Р.М. Нагдяна и т.д.),

Практическая значимость работы.

1. Результаты, полученные в работе, могут быть использованы в психотерапии для понимания принципов порождения психологических проблем в контексте афизикального подхода и принципа образования анизотропных отношений, а также при организации учебного процесса для преоделения ограничений продуктного подхода и физикального образа мышления учащихся.

2. Материалы диссертации могут быть использованы при преподавании дисциплин “История психологии”, “Общая психология” и курсов, относящихся к психическому отражению, а также в специальном курсе “История развития армянской психологической мысли”.

Структура работы. Диссертация состоит из введения, 3 глав, заключения, списка литературы и двух приложений. Объем основного текста - 187 страниц, список литературы содержит 213 источников.

GOR YESAYAN

A. I. MIRAKYAN'S EFFORT IN PSYCHOLOGICAL REFLECTION CONCEPT DEVELOPMENT

Dissertation on Psychological Sciences candidate degree in "General Psychology, Theory and History of Psychology, Personality Psychology" specialty.

Defence of the Dissertation will take place on 2016, November 8, at 12.^{oo} in Armenian State Pedagogical University after Kh. Abovyan at Psychology HAC 064 Professional Council summit.

Adress: 0010, Yerevan, RA, Tigran Mets str., 17.

SUMMARY

There are several factors determining the actuality of this research: 1. There is no research where A. I. Mirakyan's scientific activity is presented in whole and complete manner, including his academic achievements and biography. 2. In the main reflection theories haven't been done full theoretical researches and analyses, from productive point of view. 3. A. I. Mirakyan's disciples' works haven't been studied in detail, which contain perspectives of development of the transcendental perception psychology. 4. Haven't been yet discovered those perspectives that can appear with the help of A. I Mirakyan's non-productive attitude's and perception transcendental psychology's principles, while solving different problems in modern psychology.

The aim of the thesis is to present A.I. Mirakyan's scientific heritage in complete and structured form, bring to light and deservedly evaluate his investments in development of psychological reflection concept, also to show the possible usage areas for perception transcendental psychology's approaches.

The objectives of the research are following:

1. To summarize the role of A. I. Mirakyan's works in context of history of development of Armenian psychological thought.
2. To study A.I. Mirakyan's academic achievements and the creational background of his conception psychological perception.
3. To study the main statements of transcendental perception psychology.
4. To do a comparative research between general perception psychology and transcendental perception psychology theories.
5. To investigate and analyze A.I. Mirakyan's disciples' works in order to show the perspective of utilization of transcendental perception psychology's approaches.
6. To show and interprete perspectives of usage of transcendental perception psychology's principles and non-productive attitude in psychotherapy (by the example of psychoanalysis) and educational sphere.

The scientific novelty of the research is following:

1. A.I. Mirakyan's scientific activity is presented in complete, including his biography and academic achievements where is discussed the formational background of transcendental perception psychology.
2. A. I. Mirakyan's disciples'(H. A. Adamyan, A. N. Andreyev, S. L. Artemenkov, A. M. Zalzman, V. I. Kozlov, E. I. Kochurova, N. L. Morina, G. V. Shukova, V. I. Panov, T. S. Pogoreltseva, N. V. Podlesnova, I. L. Rudenko, A. A. Kananyan and others) theoretical and experimental investigation studies are analyzed and summarized, in which are discovered usage opportunities for psychological transcendental reflection psychology in perception's different variations.
3. Between general perception theories and transcendental perception theories has been done a comparative research and as a result were outlined the characteristics of this concept (transcendental perception psychology) and A.I. Mirakyan's investment in development of psychological reflection concept.
4. In context of transcendental perception psychology's principles and non-productive attitude is presented prespective of usage in psychotherapy (by the example of psychoanalysis) and educational sphere.

The theoretical value of the research.

Investigations that has been done in this work show that transcendental perception psychology's new approach, which is non-productive attitude, and unphysical mentality which is specific to this concept, can be used in other spheres of modern psychology (as we have shown by the examples of V.I. Panov's Ecopsychology and R.M. Naghdyan's psychological reflection's equivalency) in order to formulate, interpret and resolve different theoretical problems.

The practical value of the research.

1. Analyses included in this work can be applied in psychotherapy, in order to interprete the principes of origins of psychological problems with the help of non-productive attitude, also to get rid of existing limitations (which is affected by productive, physical way of thinking) while planning the study process,
2. Above mentioned analyses can be used in "History of psychology", "General psychology" and in subjects concerning psychological reflection, also in special course, which would be - "The history of development of Armenian psychological thought".

The structure and length of the dissertation.

Dissertation consists of introduction, 3 chapters, conclusion, bibliography and 2 appendixes. The length of thesis is 187 pages. Bibliography consists of 213 sources.